

523

L-88

2714

ԱՐԵՅԵԿԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ

ԽԱՒԱՐՈՒՄԸ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1892

✓ 1674

523
—
L 88

530
—
50-LA



ԱՐԵՎԵԿԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ

ԽԱՒԱՐՈՒՄԸ

Ճողովորդական ընթերցանութեան համար

Գրեց Վ. Լուսկեպիչ

(Երեք պատկերով)



Թ Ի Փ Լ Ի Ս
Տպարան Ս. Շարաձէի. || Типограф. М. Шарадзе.

1892

1009
9358

2010

2002

էք, որ պատի վրա ձեզ հետ միասին ճեմում է ձեր պատկերը. դուք վազում էք դէպի նրան, նա հեռանում է. դուք հեռանում էք՝ նա գալիս է ձեր ետևից: Վերցնում էք ձեր ձեռքը մի գալաթ և բարձրացնում, ձեր պատկերն էլ այդպէս է անում. նստում էք, նա էլ է նստում:

—Ապա, մտածում էք դուք,—տեսնենք վերջը թնչ կը լինի, և այդ ասելով վառում էք մի ուրիշ մոմ էլ, որը նոյնպէս դնում էք սեղանի վրա՝ առաջինից ոչ-շատ հեռու: Յանկարծ դուք տեսնում էք, որ պատի վրա, փոխանակ մէկի, պատկերը երկու է դառնում: Հեռանում էք պատից, պատկերը մեծանում է, մօտենում էք՝ պատկերը փոքրանում է: Այս թնչ պատկերներ են, մտածում էք:


—Այդ պատկերները կոչվում են ստուերներ. ձեր ստուերները, գալաթի ստուերը: Իսկ թէ թնչից են առաջ գալիս դրանք, այս րօպէիս կը բացատրեմ: Չրագի լոյսն ընկնում է սպիտակ պատի վրա և լուսաւորում նրան. դուք կանգնել էք ճրագի առաջ և այդպիսով լոյսի մի մասը ձեզ վրա ընկնելով, դուք չէք թողնում որ ընկնի պատի վրա: Իրա համար էլ, այն ժամանակ, երբ ամբողջ պատը լուսաւորված է ճրագի լոյսով, այն մասը, որ դուք խաւարեցրիք ձեր մարմնով, մնում է մութ՝ և այդպիսով պատի վրա ձևակերպվում է ձեր ստուերը: Այն գալաթը, որ դուք ձեր ձեռքումն էք բռնել, նոյնպէս չի թողնում, որ լոյսը պատի

վրա ընկնի. բայց որովհետև լոյսը կարողանում է թափանցել ապակու միջից, նրա համար էլ գալաթի ստուերը աւելի բաց, աւելի անորոշ է լինում: Երբ վառում էք երկու ճրագ, այն ժամանակ նրանցից իւրաքանչիւրը մի մի ըստուեր է գցում պատի վրա, եթէ 10—20 ճրագ վառէք, 10—20 էլ ստուեր կուեննաք. բայց այս անգամ ոչ թէ առաջինի պէս պարզ, այլ խառն, որովհետև պատը մեծ չը լինելով, ստուերները ընկնում են միմեանց վրա և խառնվում իրար հետ:

Սրանից մարդ հասկանում է, որ եթէ ճրագը ստուեր է գոյացնում, արեգակը և լուսինն էլ անպատճառ կարող են գոյացնել, եթէ յանկարծ մի որ և իցէ մութ բան մէջ տեղ ընկնի և չը թողնի, որ նրանց ճառագայթները ընկնեն երկրիս վրա:

Այդ բանը կարող է պատահել: Եւ ես այս րօպէիս ձեզ կը պատմեմ, թէ ինչպէս արեգակը և լուսինը նոյնպէս կարող են ծածկվել ստուերներով:

—Այս ինչ է, կը մտածէք դուք, թնչ բան ունի ստուերը լուսնի և արևի հետ, կամ ինչ յա-



րաբերութիւն կայ գաւաթի ստուերի և լուսնի ու արեգակի խաւարումների մէջ: Շատ կարելի է դուք չը գիտէք թէ քնչ բան են լուսնի և արևի խաւարումները, մինչև իսկ, գուցէ չէք էլ տեսել խաւարում: Եթէ այդպէս է, ուրեմն լսեցէք:

Մի մի անգամ, երբ լուսնի լրումն է, այսինքն փայլում է կլոր, յանկարծ կարծես սկսում է խաւարիլ, մի ինչ որ սև բան գալիս ծածկում է նրան: Առաջ խաւարում է մի քառորդ մասը, յետոյ կէսը, յետոյ $\frac{2}{3}$ մասը և վերջապէս սկսում է հետզհետէ բոլորովին խաւարել և դուք փայլուն լուսնի փոխարէն տեսնում էք մի ինչ որ սև ու խաւար կլոր բան:

Անցնում է մի քանի ժամ և լուսինը նորից երևում է. ահա լուսաւորվեց նրա մի փոքրիկ կողքը. այդ կողքը սկսեց մեծանալ, մեծանալ—և ահա կրկին ձեր առջևն է կէս լուսաւորված փայլուն լուսինը. միևս կէսը դեռ սև է: Մի քիչ ժամանակից յետոյ, կարծես ոչինչ չի եղել, առաջվայ պէս փայլուն ու կլոր երևում է ձեր աչքին:

Երբ այդպէս բան է պատահում, ամենքը ասում են ահա «լուսնի խաւարում» եղաւ: Մի և նոյնն էլ, թէև շատ քիչ անգամ, պատահում է արեգակի հետ:

Նա յանկարծ սկսում է աղօտանալ և մի ինչ որ սարսափելի, ճնշող մութ սկսում է պատել մեր երկիրը:

Մարդ և անասուն սաստիկ վախենում են երբեմն և չեն հասկանում թէ քնչ է պատահում արեգակի հետ. ինչո՞ւ նա յանկարծ սևանում է, ինչո՞ւ այն օրը, որ շատ պարզ օր էր, յանկարծ մըթնանում է և երկրի վրա տեղ-տեղ երևում են աստղեր անգամ: Վախը տիրում է մարդուն և այս դէպքի մէջ շատ անգամ մարդիկ Աստուծու բարկութեան մի նշանն են տեսնում. մարդկանց այնպէս է թվում թէ խաւարող արեգակը մի վատ բան է գուշակում... կամ պատերազմ թշնամու հետ, կամ ցաւ, խօլերա և ուրիշ դժբախտութիւններ: Վախից մարդ սկսում է Աստուծուն աղօթել և իր ծանր մեղքերի թողութիւնը խնդրել:

II

Այժմ կը բացատրեմ թէ քնչից է լինում արևի և լուսնի խաւարումը. բայց, բացատրելուց առաջ, տեսնենք թէ քնչ են մտածում դրա համար՝ տգէտ մարդիկ և անկիրթ ազգերը: Շատ գուարճալի բաներ կարելի էր պատմել այս առիթով, բայց չարժէ ժամանակ կորցնել. դրա համար էլ ես կը պատմեմ միայն մի քանի՝ աւելի ծիծաղելի կարծիքներ:

Պարսիկները և չինացիք, նոյնպէս և շատ հայ գիւղացիներ, կարծում են թէ լուսնի խաւարումը նրանից է, որ մի սոսկալի հրէշ երկնքի վրա սկսում է կուել լուսնի հետ և կո՛ւ է տալիս

նրան: Այդպէս կարծելով, նրանք սկսում էին թրմ-
բուկ ծեծել, շեփոր փչել, պղինձ ծեծել, որ ինչ
է, վիշապը վախենայ ու թողնի լուսնին: Իբր թէ,
իրաւ, վիշապը վախեցած այդ ձայներից, թողնում
է լուսնին ու փախչում և... Խաւարումը անց-
նում է:

Այդպիսի մի բան էլ մտածում են Հնդիկները:
— Երբ, ասում են նրանք, մեծ և սև ճանկերով
վիշապն իր ճանկերը ուղղում է լուսնի կամ ա-
րևի վրա, սրանց լոյսը խափանվում է և որովհե-
տև վիշապը բեզարեւոյ թողնում է նրանց
և փախչում, լուսինն ու արեգակը նորից սկսում են
լոյս տալ:

Սրանից երևում է, որ բոլոր այդ ազգերը
լուսնին ու արևին կենդանի էակներ են համա-
րում, նման այն աստուածներին, որոնք կռւում
էին վիշապների հետ և կամ թէ բարկանում մարդ-
կերանց վրա: Եւ ահա, երբ նրանք բարկանում
են—մտածում են շատերը—սկսում են այլ ևս
լոյս չը տալ և զրկում են մարդկանց՝ իրանց կեն-
սատու ճառագայթներից:

Որպէս զի դուք տեսնէք, թէ ինչպէս մարդիկ
երբեմն իրանց տգիտութեան մէջ հասնում են ծայ-
րահեղութեան, պատմեմ ձեզ մի գուարճալի պատ-
մութիւն, որ պատահել է Անգլիայում:

Մի լուսընկայ գիշեր, էջը ջուր էր խմում
առուակից: Լուսինը պայծառ լոյս էր գցել ջրի

վրա և անդրադարձել էր նրա մէջ այնպէս, ինչ-
պէս մեր պատկերը՝ հայելու մէջ: Յանկարծ վրա
հասաւ լուսնի խաւարումը. լուսինը սկսեց մթնել
և ծածկվել:

Երբ լուսինը ծածկվեց, այդտեղ գտնվող գիւ-
ղացիները շատ վախեցան. սկզբում չը գիտէին ինչ
անել, բայց վերջապէս մէկը—պիտի ենթադրել ա-
մենից խեղօքը,—բացականչեց. «էջն է կուլ
տողել լուսնին»:

Ամենքը վազեցին էջի մօտ, վրա տուին ու
սկսեցին խեղճ անասունի փորը ճղել, որ ինչ է
կուլ տուած լուսինը հանեն. լիմարները կարծում
էին թէ այդ հանդարտ երկարականջն առուակից
ջուր խմելու ժամանակ, լուսինն էլ ջրի հետ կուլ
էր տուել:

Մի քիչ վերևում ասացի, որ լուսնի և արե-
գակի խաւարումները վախեցնում են տղետ և ան-
կիրթ մարդկանց և ազգերին: Հին յոյների զօրա-
գլուխներն անգամ իրանց անձի վրա փորձում է-
ին այդ, տեսնելով թէ ինչպէս շշկվում են զին-
ւորները, հաւատացած լինելով թէ խաւարումները
գուշակում են պատերազմի անաջողութիւն: Յու-
նական մի պատերազմի ժամանակ, երբ լուսինը
խաւարեց, զօրքերի գլխաւորը՝ Նիկիոս անուանով մէ-
կը և իր բոլոր զօրքը լուսահատութեան մէջ ըն-
կան. նրանց այնպէս թվեց, որ կոտորվում են, որ
պիտի յաղթվեն: Եւ ինչ էք կարծում, այնպէս էլ

պատահեց: Զօրքի գլխաւորը սպանվեց կռւի ժամանակ և նրա զինուորները յաղթվելով ցրվեցին:

Ի հարկէ, այս պատահեց ոչ թէ լուսնի խաւարումից, այլ նրանից, որ ամեն տեսակ յիմարութիւնների հաւատացող զօրագլուխը և իր զօրքը վախենալով խաւարումից, շշկվեցին, վախեցան, կորցրին քաջութիւնը, սկսեցին վախենալով կռւել և յաղթվեցին:

Այսպիսի դէպքեր շատ են եղել և միշտ միմեանց նման: Այդ դէպքերը ցոյց են տալիս, որ անկրթութիւնը և նախապաշարումները միշտ վընաս են տալիս մարդկանց:

III


Երկիրս պտտում է արեգակի շուրս կողմը. լուսինը մեր երկրի շուրս կողմը և երկրիս հետ միասին՝ պտոյտ է տալիս արեգակի շուրջը:

Մեր երկիրը խաւար է. նրա միջեց լոյսը չի անցկենում: Լուսինն էլ այդպէս է. նա էլ իր սեփական լոյսը չունի՝ իր լոյսը արեգակից է ստանում:

Այս բոլորի բացատրութիւնը ընթերցողը կը գտնի «Նրկրագուննդ» գրքում ¹⁾. այժմ փորձենք բացատրելու թէ ինչից են առաջանում արևի և լուսնի խաւարումները: Բայց գրաւ համար նախ և առաջ ես ձեզ խորհուրդ կը տալի մի այսպիսի

¹⁾ Այդ գիրքը առանձին լոյս կը տեսնի:

փորձ անել: Այդ փորձը ձեզ աւելի լաւ կը հասկացնի խաւարումի պատճառները: Վերցրէք մի վառված ճրագ և կամ լամպ. նոյնպէս և երկու փայտէ գնդակներ՝ մէկը սև և



մեծ, միւսը սպիտակ ու փոքր: Ինչուք թէ ճրագը արեգակն է, մեծ գնդակը՝ մեր երկիրը, իսկ փոքր գնդակը՝ լուսինը: Ճրագը և գնդակները սեղանի վրա միմեանց մօտ դրէք այնպէս, որ նրանք

Նրկրագուննդ փորձերով

գտնվեն ուղիղ մի գծի վրա: Այդ գնդակներից փոքրը գնդակը, այսինքն լուսինը, պիտի գտնվի ճրագի և մեծ գնդակի՝ մեր երկրի մէջ տեղում: Այդպիսով փոքր գնդակը չի թողնիլ որ ճրագի լոյսը ընկնի մեծ գնդակի, այսինքն երկրի վրա՝ և խաւարում կը լինի: Յետոյ գնդակները դրէք այնպէս, որ այժմ էլ մեծ-սև գնդակը՝ այսինքն երկիրը, ընկնի ճրագի և փոքր գնդակի՝ այսինքն լուսնի մէջ տեղը. նորից արեգակի լոյսը պիտի անցնի մեծ գնդակի կողքերից և նրա ստուերը կընկնի փոքրիկ գնդակի վրա: Փոքրիկ գնդակը այդպիսով կը գտնվի մեծ գնդակի ստուերի տակը:

Այնպէս համարենք թէ մի և նոյն կերպ էլ պատահում է իսկական երկրի հետ: Եթէ երկիրը արևի չորս կողմը պտտում է և լուսինն էլ երկրիս շուրջը, ուրեմն կարող է պատահել այնպէս, որ երկիրս, լուսինը և արեգակը ընկնեն մի և նոյն ճանապարհի՝ մի գծի վրա: Ենթադրենք, որ երկիրս գտնվի այդ ժամանակ արևի և լուսնի մէջ տեղում. երկիրս մոլթն է, լուսինն էլ լոյս չունի. չէ որ արևի լոյսը երկրիս վրա ընկնելով՝ լուսինն էլ լոյս չի առնիլ, քանի որ նա իր լոյսն արեգակից է ստանում միշտ: Եւ ինչ էք կարծում, հէնց այդպէս էլ լինում է: Խաւար երկիրը խափանում է արևի ճառագայթներին և չի թողնում, որ լուսինը լոյս առնի. այդպիսով լուսինը խաւարում է:

Իայց ինչո՞ւ լուսինը քիչ-քիչ է լուսաւորվում

և ոչ թէ միանգամից: Նրա համար, որ երկիրս լուսնի և արևի մէջ տեղն է ընկնում ո՞չ թէ լանկարծ, այլ կամաց-կամաց: Քանի երկիրը մտնենում է, լուսինը քիչ-քիչ ստուերով ծածկվում է. երբ հասաւ ուղիղ արևի և լուսնի մէջտեղը՝ այն ժամանակ լուսինը բոլորովին մթնանում է: Եւ վերջապէս երկիրը խօ միշտ այդտեղ չի մնում. նա ինչպէս քիչ-քիչ եկել էր, քիչ-քիչ էլ հեռանում է ճանապարհի մէջ տեղից, այնպէս՝ որ լուսինը քիչ քիչ լուսաւորվում է և վերջ ի վերջոյ՝ բոլորովին ազատվում է երկրի ստուերից:

Ուրեմն լուսնի խաւարումը առաջանում է նրանից, որ սև երկիրը գնում կանգնում է արեգակի առջև, փակում է լուսնին ու չէ թողնում, որ սա լոյս ստանայ արեգակից: Ուրեմն այն մոլթ կլոր գիծը, որ մենք լուսնի խաւարումի ժամանակ տեսնում ենք լուսնի վրա, ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր երկրի շուաքը. ի ս կ մ ե ը ե ը կ ը ը շ ու ա ք ը՝ մ ի շ տ կ լ ո ը է: Ի՞նչու կլոր և ոչ ուրիշ ձևի.— պատճառն այն է, որ մեր երկիրն էլ խնձորի պէս կլոր է և հէնց դրա համար էլ նրա գցած շուաքն էլ կլոր է լինում: Եթէ երկիրս քառակուսի լինէր, իր շուաքն էլ քառակուսի կը լինէր. հէնց այդ շուաքի կլոր լինելն էլ՝ ցոյց է տալիս, որ երկիրս էլ կլոր է:

IV

Այն բոլորը, ինչ որ ասեցինք նրա համար, որ բացատրվի թէ ինչպէս է խաւարում լուսինը, կարելի է ասել արեգակի խաւարման համար էլ:

Եթէ արեգակի չորս կողմը պտտելու ժամանակ, կարող է պատահել, որ երկիրը իր չորս կողմը պտտող լուսնի հետ արեգակի ճանապարհի վրա ընկնեն այնպէս, որ երկիրը գտնվի արեգակի և լուսնի մէջ տեղը, ինչու համար չի կարող պատահել, որ լուսնին էլ ընկնի արեգակի և երկրի մէջ տեղը:

Այդ ժամանակ, ի հարկէ, մութ լուսինը կը փակի արեգակի լոյսը և չի թողնիլ, որ նրա լոյսը ընկնի երկրի վրա, և ահա այդպիսով լինում է արեգակի խաւարումը:

Ուրեմն արեգակի խաւարումը լինում է միշտ այն ժամանակ, երբ լուսինը մտնում է երկրի և արեգակի մէջ տեղը: Երկիրս այդ ժամանակ մթնում է նրա համար, որ լուսնի շուրջը ծածկում է նրան. իսկ այն կլոր շուրջը, որ մենք այդպէս ժամանակ տեսնում ենք արեգակի վրա՝ ինքը՝ ս և լուսնին է, որ կայ:

Արեգակի խաւարման ժամանակ միայն մենք կարողանում ենք հաստատ իմանալ, որ լուսինը մի խաւար բան է և այդ իմանում ենք նրանով, որ մենք տեսնում ենք նրա մութ կողմը:

Ուսումնական մարդիկ ոչ միայն գիտեն խա-

ւարումների պատճառները, այլ և գիտեն ու կարող են առաջուց ասել թէ երբ պիտի լինի լուսնի և կամ արեգակի խաւարումը: Ասենք դրա իմանալը՝ մի շատ մեծ բան էլ չէ:

Դիցուք թէ դուք գիտէք այն ճանապարհը, որի վրայով երկիրը շարժվում, պտտվում է արեգակի չորս կողմը և լուսնի պտտվելը երկրի չորս կողմը: Յետոյ, ընդունենք, որ գիտէք նաև թէ այդ ճանապարհի երկարութիւնը ինչքան է և երկրի համար սրքան ժամանակ է պէտք, որ նա մէկ անգամ կարողանայ պտոյա տալ արեգակի գլխովը և որքան ժամանակ, որ լուսինը կարողանայ պտտել երկրի չորս կողմը: Թէ որ այդքանը իմացանք, մնացածը հեշտ է. սկզբից կարելի է հաշուել թէ երբ այնպէս կը լինի, որ լուսինը գայ ընկնի արեգակի ու երկրի մէջ տեղը և կամ երկիրս գնայ ընկնի լուսնի ու արեգակի մէջ տեղը:

Այժմ ձեզ մի փոքրիկ բան պատմեմ այդ մասին: Քրիստափոր Կոլումբոսը, նա՛ որ գտաւ մի նոր երկիր, այսինքն Ամերիկան, այդ երկրի մէջ եղած ժամանակ, մի անգամ շատ նեղ դրութեան մէջ էր ընկել: Այդ երկրի վայրենիները Քրիստափոր Կոլումբոսի և նրա ընկերների հետ բարեկամ չէին և չէին ուզում ուտելիք տալ: Քիչ էր մնացել բոլորն էլ քաղցածութիւնից մեռնէին:

Ահա այդ ժամանակ Կոլումբոսը, քաղցածութիւնից չը կոտորվելու համար, մի այսպիսի օյիւն

Հանեց վայրենիների գլխին: Նա գիտէր, որ չուտով լուսնի խաւարում պիտի լինէր: Դրա համար էլ, նա կանչեց իր մօտ վայրենիների գլխաւորին և ասաց, որ եթէ իրանց ուտելիք չը տան, այն ժամանակ նա լուսնին կը խաւարեցնի և կը զրկի երկիրը նրա լոյսից:

Վայրենիները ծիծաղեցին նրա վրա և չը հաւատացին: Բայց վերջապէս եկաւ այն ժամը, որ լուսինը պիտի խաւարէր: Եւ իսկապէս խաւարեց էլ: Վայրենիները վախեցան, իսկոյն շատ ուտելիք հաւաքեցին, տարան Կոլոմբոսին և արտասուքով խնդրեցին, որ ներէ իրանց, որ չը բարկանայ և լուսնին վերադարձնի իւր լոյսը:

Կոլոմբոսը ի հարկէ, առաւ ուտելիքները. իսկ խաւարումը այդ միջոցին անցաւ և լուսինը նորից սկսեց լոյս տալ: Խեղճ վայրենիները հաւատացած էին, որ Կոլոմբոսը երկնքին հրամայում է և երկիրն ու լուսինը հնազանդվում են նրա հրամանին: Ի հարկէ, դա մի հանաք էր, որովհետեւ Կոլոմբոսը լինելով մի գիտուն մարդ, գիտէր թէ երբ է լինելու խաւարումը: Նրա բախտիցը, խաւարումը հէնց այն ժամանակ էր լինելու, երբ նրա ընկերները և ինքը քաղցածութիւնից մեռնելու էին: Ի՞նչ անէր. նա էլ օգտվեց այդ դէպքից վայրենիներին վախեցնելու համար, որպէս զի իրանց ուտելիք տան:

2001
8556



ԵՐԿՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

I

Մի ուսումնական մարդ, անունը Պլատո, այսպիսի փորձեր էր անում:

Այդ փորձի համար նա ունէր մի ապակեայ արկղ և երեք տեսակ հեղուկ—կնճիթի իւղ, ջուր և սպիրտ:

Իւղը ջրից թեթեւ է լինում և չէ խառնվում ջրի հետ. դրա համար էլ, եթէ մի գաւաթի մէջ իւղը խառնէք ջրի հետ, իւղը կը բարձրանայ և կը սկսի ջրի երեսին լողալ:

Սպիրտն էլ ջրից թեթեւ է, բայց խառնվում է նրա հետ: Կարելի է ջուրը և սպիրտը խառնել մէկ-մէկու հետ մի գաւաթի մէջ այն չափով (սպիրտը ջրի հետ խառնվելով օդի է դառնում), որ կշռի այնքան, որքան կը կշռի նոյն մեծութեամբ գաւաթով կնճութի իւղը:

Այսպիսի ջրախառն սպիրտով մօտ տասը գաւաթ պատրաստելուց յետոյ, Պլատոն լցրեց ապակեայ արկղի մէջ. դրանից յետոյ նա լցրեց նրանց վրա մի գաւաթ կնճութի իւղ: Իւղն իսկոյն գունդ

դարձաւ և կանգնեց ապակեայ արկղի մէջ տեղում:

Այդ բոլորը անելուց յետոյ, Պլատոն անցկացրեց իւրի գնդի միջից մի սունակ և սկսեց պտտեցնել:

Սունակը պտտում էր՝ իւրի գնդակն էլ. քանի արագ էր պտտեցնում սունակը, այնքան արագ էլ պտտում էր գնդակը, որից կտրտվում էին փոքր կտորներ և դառնում էին մանր գունդեր: Այդպիսով ապակեայ արկղի մէջ գոյացաւ մի մեծ պտտող գնդակ, որի չորս կողմը պտուտ էին գալիս նրա նման, բայց փոքր գնդակներ:

—Յետոյ, կը հարցնէք դուք:

Երևելի ուսումնական Լապլասը և գերմանացի մեծ գիտնական Կանտը կարծում են, որ աստղերը, արեգակը, երկիրը և լուսինը գոյացել են հէնց այնպէս, ինչպէս Պլատոն գոյացրեց իւրի մեծ պտտող գունդը և նրա չորս կողմը արագութեամբ պտտող՝ բազմաթիւ մանր իւրի գնդակիկները:

Ճիշդ են մտածում թէ ոչ, այդ դժուար է ասել, բայց շատ հետաքրքիր է լսել թէ գրանք—այդ գիտունները թնչ են ասում մեր երկրի ծագումի մասին:

Լսենք ուրեմն՝ թէ թնչ են ասում:

Երբ ջուրը տաքացնում են, շոգի (բուղ) է դառնում. եռացրէք ծծումբը (քիւլփուրդ)՝ հեղուկ կը դառնայ. եթէ աւելի եռացնէք՝ շոգիի կը փոխ-


վի: Աերցրէք սնդիկը (ջիվա) և շատ եռացրէք նրան—իսկոյն շոգի կը դառնայ: Սառեցնէք նորից այդ բոլոր շոգիները և դուք կը ստանաք սնդիկ, ճիշդ այնպէս, որ եթէ դուք հաւաքէք ու սառցնէք ջրի շոգին, նորից ջուր կը ստանաք: Եթէ սկսէք եռացնել կլալեկը և արճիճը, առաջ կը հալվեն, յետոյ կը շոգիանան և այն ամանում, որի մէջ դուք նրանց հալում էիք, էլ ոչինչ չի մնալ: Եթէ հաւաքէք ու նորից սառցնէք այդ շոգիները, փր ստանաք ձեր կլայեկն ու արճիճը Յայտնի բան է, որ պղինձը եթէ հալի, հեղուկ կը դառնայ, իսկ եթէ մենք կարողանանք մի ձևով ձեռք բերել շատ զօրեղ տաքութիւն, այն ժամանակ մետաղները, հողը և հանքերը ոչ միայն կարող ենք հալեցնել, այլ և նրանց կարող ենք շոգի էլ դարձնել, շոգի, որը կը ցրվի օդի մէջ ու կ'անհետանայ այնպէս, ինչպէս լինում է ծուխը և կամ ջրի շոգին: Բայց, ի հարկէ, գրանք կը լինէին ոչ թէ ջրի, այլ քարի և հանքերի շոգիներ, որոնց եթէ մենք հաւաքէինք ու սառցնէինք, նորից կը ստանայինք քար և հանք, այնպէս՝ ինչպէս լինում է ջրի, ծծումբի, կլայեկի և արճիճի հետ. այսինքն առաջ հեղուկ և յետոյ նորից պինդ մարմիններ:

II

Շատ առաջ, այսինքն սրանից շատ միլիոն տարիներ առաջ, ոչ արեգակ կար, ոչ երկիր և ոչ

էլ լուսին: Կար միայն այն անսահման երկինքը, որի վրա այժմ լողում են անհամար աստղեր, մեր արեգակը, լուսինը և երկիրը:

Առաջ այդ անվերջ տարածութիւնը լի էր միայն շոգիներով: Խառնուրդը սարսափելի էր: Քար, հող, մետաղ, երկաթ և ջուր՝ բոլորը շոգի էին և ցրված երկնքի վրա՝ ծուխի պէս: Շոգի, միայն շոգի, շոգի ամեն տեղ և ամեն կողմ. ուրիշ ոչինչ:



Երկիրը Կիլեբերի մէջ

Մի անհաւատալի սարսափելի տաքութիւն թագաւորում էր բնութեան մէջ: Բայց վերջապէս տաքութիւնը սկսեց պակասել. քարերի և մետաղների շոգիները սառեցին, միմեանց մօտեցան, ցած իջան և կազմեցին մեծ մեծ կաթիլներ,

իսկ այդ կաթիլները վերջ ի վերջոյ միացան և շոգիների փոխարէն գոյացաւ մի ահագին մեծութեամբ կրակի գնդակ, որն ամբողջապէս բաղկացած էր հալած քարերից, հալած հողից և հալած մետաղներից:

Այս գունդը մեր այժմեան արեգակից շատ և շատ մեծ էր, իսկ արեգակը, ինչպէս յայտնի է, մեր երկրից մեծ է մէկ միլիոն չորս հարիւր հազար անգամ:

Կրակի-հեղուկ այս հսկայ գունդն ինքն իրան պտտում էր, իսկ նրանից կտրտվում էին մեծ մեծ կտորներ, որոնք նոյնպէս գնդակներ էին դառնում և պտտում: Ամեն նոր գունդ եղաւ մի մի աստղ: Այս աստղերի մէջ մէկը, որ ամենից մօտ է մեզ, լուսաւորում է մեզ. մեր այդ մեծ լուսատուն արեգակն է, որ տալիս է կեանք, լոյս և տաքութիւն, հաւասարապէս ամենքին՝ թէ հասարակ, թէ երևելի մարդուն, թէ խեղճին և թէ հարուստին:

Կրակի այն մեծ գնդից, որին մենք այժմ անուանում ենք արեգակ, կտրտվեցին 8 մեծ կտորներ: Այդ կտորներն էլ իրանց կարգին՝ եղան 8 գնդակներ, որոնք պտտելով իրանց շուրջը, սկսեցին պտտել նաև արեգակի չորս կողմը: Հէնց այդ 8 կտորներից մէկն է մեր երկիրը, որ Հէնց այս րօպէիս էլ միւս 7 կտորների հետ յորձանքի պէս պտտում է արեգակի չորս կողմը:

Երբ դեռ մեր երկիրը հալված կրակի գնդակ էր, նրանից էլ կտրվեց մի փոքրիկ կտոր, որ եղաւ մի գնդակ և սկսեց պտտել երկրիս չորս կողմը: Դա լուսինն է, որ այս րօպէիս էլ հէնց պտտում է երկրի շուրջը:

Մեր երկիրը երկար ժամանակ չը մնաց հեղուկ և լուսաւոր, կարմիր բոցերով: Անցան դարեր. նա սկսեց վերեւից սառել և կեղև կապել. լուսնին էլ այդպէս եղաւ, նա էլ սառեց և այժմ նա նոյնպէս մութ և անլոյս գունդ է, ինչպէս և մեր երկիրը: Դուք արդէն գիտէք, որ լուսինն ինքքը լոյս չունի և լոյսն արեգակից է ստանում:

Այդպէս ուրեմն, երկիրս սկսեց սառել իր հեղուկ դրութիւնից և կեղև կապել դարերի ընթացքում և հետզհետէ հաստանալ ու պնդանալ: Այնու ամենայնիւ նա դեռ բոլորովին չէ սառել: Հողի այս կոյտ կեղևի տակ, որը մի քանի տեղ՝ մինչև 130 վերստ խորութիւն ունի, այս րօպէիս իսկ կան հալված՝ կրակի, քարերի ամբողջ ծովեր:

Երկրիս սառչելու հետ, սառչել սկսեցին նաև երկնքի ջրի շոգիները, խտացան և գոյացրին ամպ: Սարսափելի մէգով պատած էր այն ժամանակ երկիրս: Սև սև ամպերն ահագին թանձրութեամբ բռնեցին երկնքի երեսը և չէին թողնում, որ արևի լոյսը ընկնի երկրի վրա: Անընդհատ որոտումներ էին լսվում և կայծակներ լինում. ամբողջ տի-

եղերքը լուսաւորված էր ոչ թէ արեգակով, այլ կայծակի անընդհատ փայլակներով:

Երկնքի վրայի տաքութիւնն աւելի սաստկացաւ. ամպերն անձրև դարձան և ջրի հեղեղ թափեցին երկրի վրա այնքան, որ երկիրս ծածկվեց ջրով, էլ ցամաք չէր տեսնվում: Սա ընդհանուր ջրհեղեղն էր. բայց ի հարկէ, այդ ջրհեղեղը չը վնասեց ոչ մի շնչաւորի, որովհետև մինչև այդ ժամանակ դեռ կեանք ու շնչաւոր չը կար աշխարհիս երեսին. այդ ժամանակ այնքան տաք էր, որ ոչ մի շնչաւոր չէր կարող դեռ ևս գոյանալ:

Անցան մի քանի հազար տարի էլ:

Երկրիս վրա թափած ջրի մի մասը հողը ծածեց, միւս մասն էլ բարձրացաւ նորից դէպի երկինք. երևացին կղզիներ և ցամաքներ, ամպերը սկսեցին կամաց կամաց ցրվել. կայծակ աւելի քիչ էր խփում, փայլակը՝ ոչ յաճախ:

Վերջապէս արեգակի կեանք տուող ճառագայթներն ընկան երկրիս վրա. հասաւ հանդիսաւոր րօպէն: Այդ ճառագայթը կեանք մտցրեց ջրի և ցամաքի մէջ:

Անցան նորից շատ դարեր. — կենդանիները և բոյսերը շատացան ու շատացան. վերջապէս բնութեան տիրող մարդը հանդէս եկաւ երկրի վրա, որ օգտվի նրա բերքերով:

Ահա այդպէս է այն պատմութիւնը, որով յայտնվում է թէ սրտեղից և քնչպէս գոյացան ամ-

բողջ աշխարհը, արեգակը, մեր երկիրը և լուսինը:

III

Այս Համառօտ, շատ Համառօտ պատմութիւնից դուք իմացաք, որ արեգակի չորս կողմը, բացի երկրից, պտտում են ուրիշ մութ գնդեր ևս: Այո, այդ ճիշդ է. Կոպերնիկ և Գալիլէյ—մեծ ուսումնականները, մեզ յայտնում են, որ արեգակի չորս կողմը, զանազան Հեռաւորութիւնների վրա, պտտում են ուրիշ 6 թ մեծ գունդեր: Ահա նրանց անունները. Մերկուրի, Վեներա, Մարս, Իւպիտեր, Սատուրն, Ուրան և Նեպտուն:

Այս եօթ գնդերը լուսնի ու մեր երկրի պէս մութ երկիրներ են, բոլորն էլ իրանց լոյսը՝ լուսնի պէս՝ ստանում են արեգակից: Իրանք բոլորն էլ կազմվել են այնպէս, ինչպէս որ մեր երկիրը և լուսինը. բոլորին գոյացրել է արեգակը, որի չորս կողմը դրանք՝ անձնանուէր որդիների պէս՝ այժմ էլ պտտում են:

Արեգակից ամենամօտ պտտողն է Մերկուրին. սրա ետևից՝ գեղեցիկ Վեներան, երկրորդը՝ մեր երկիրն է, իր ընկերակից լուսնի հետ. մեր երկրի ետևից գալիս է Մարսը, փոքր ինչ հեռու՝ Իւպիտերը, իսկ աւելի հեռու՝ Սատուրնը: Արեգակից ամենահեռու գունդն է՝ Նեպտունը: Բայց Նեպտունի և Սատուրնի մէջ գտնվում է մի ուրիշ պտտող գունդ էլ, որի անունն է Ուրան:

Մի պարզ գիշեր նայեցէք երկնքի վրա:

Ինչքան անթիւ աստղեր են տեսնվում այդ անհուն կապուսթեան վրա. ինչ գեղեցկութիւն և վսեմութիւն: Մեծ աստղեր, փոքր աստղեր, փայլուն, հազիւ նկատվող, հազիւ փայլող աստղեր. Գիշերվայ գեղեցկուհի լուսինը փայլում է այդ անհամար աստղերի և աստղիկների մէջ: «Ծիր կաթինը» լայն սպիտակ գօտիի պէս՝ փռված է ամբողջ երկնակամարի վրա. այդտեղ են նաև այն գունդերը, որոնց մասին պատմեցի ձեզ. նրանք էլ աստղերի պէս են երևում և փայլում: Բայց դուք արդէն գիտէք, որ դրանց լոյսն իրանցից չէ, այլ արեգակից: Իրաւ է, գիշերը մենք այստեղից չենք տեսնում արեգակին, բայց այդ գունդերի—այդ մութ երկիրների համար, նա տեսանելի է, նա լոյս է տալիս, ուղարկում է նրանց իր ճառագայթները: Եւ դրանից է, որ նրանք փայլում են որպէս աստղեր:

Եթէ ուզենանք աստղերից զանազանել այդ եօթ գնդերին, ինչ անուն տանք: Նրանք անուանվում են հայերէն՝ մ ո լ ո Ր ա կ ն ե Ր. իսկ օտար լեզուներով պլ ա ն է տ ն ե Ր: «Պլանետա» լուսարէն է և նշանակում է թ ա փ ա ո ղ գ ն զ ա կ:

Եւ որովհետև այդ գնդերը պտտում են արեգակի չորս կողմը և թափառում երկնքում, դրա համար էլ կոչվում են թափառող գնդակներ: Երկիրը և լուսինն էլ պլանետներ-մոլորակներ են:

IV

Ուրեմն, ինչ բաներ են ասողերը: Նրանք էլ նոյնպէս անշարժ արեգակներ են, ինչպէս որ մեր արեգակն է. միայն թէ նրանք շատ և շատ հեռու լինելով երկրից, փոքր են երևում մեզ, և արեգակի հետ համեմատելով, շատ նուազ լոյս են արձակում: Թէ ցերեկ և թէ գիշեր ասողերը մի և նոյն տեղումն են. բայց ցերեկը չեն երևում, որովհետև իրանց աննշան լոյսը նուազում է արեգակի լոյսի առջև: Եթէ մի որ և իցէ բան արգելի արեգակի լոյսը, այն ժամանակ ասողերը կերևան ցերեկով գիշերվայ պէս: Այդպէս բան, ինչպէս գիտէք, կարող է պատահել արեգակի կատարեալ խաւարման ժամանակ. լուսինը, որ արեգակի խաւարման ժամանակ այլ ևս լոյս չի ունենում, կեանք է տալիս ասողերին և նրանք օրը ցերեկով փայլում են երկնքի վրա:

Ինչպէս արեգակի, նոյնպէս և իւրաքանչիւր աստղի շուրջը թափառում են շատ մոլորակներ նման մեր երկրին, Մերկուրիին, Վեներային և այլն: Իւրաքանչիւր աստղ մի արեգակ է, որ կեանք է տալիս մեր երկրի նման ուրիշ երկիրներին: Մեր երկիրը կախված է արեգակից, որի չորս կողմը պտոյտ են գալիս ութ մեծ գնդեր—Մերկուրի, Վեներա, Երկիրը, Մարս, Իւպիտեր, Սատուրն, Ուրան, Նեպտուն և բազմաթիւ ուրիշ մանր գնդեր: Իսկ ուրիշ երկիրները, որոնք գտնվում են տիեզերքի

մէջ, իւրաքանչիւրը կազմում է մի մի աստղ, որոնց շուրջը, ինչպէս և արեգակի շուրջը, պտտում են մեր երկրի և միւսների նման գնդեր: Որչափ աստղ կայ, այնքան էլ երկիր կայ. իսկ աստղեր շատ և շատ կան, այնքան շատ, որ հաշուել էլ չի կարելի: Նայեցէք ամենահեռուն երևացող կաթի գոյն ունեցող մանր աստղերին, որոնց կոչում են «ծիր կաթին». ինչ էք կարծում, ինչ են դրանք: Դրանք մեզնից չափազանց հեռու գտնվող աստղերի ծով են, որոնք հաւաքվել են մի լայն գօտիի պէս և երբեմն էլ կոչվում են «յարգգողի» աստղեր: Թէ որքան աստղ կայ այնտեղ, ոչ ոք չի կարող հաշուել: Բանն այն է, որ դրանցից իւրաքանչիւրը մի մի արեգակ է, բայց մեզնից շատ հեռու արեգակ, որոնց շուրջը պտոյտ են գալիս մոլթ գնդեր, մոլորակներ, և լուսաւորվում են այն լուսով, ինչ որ տալիս է իր մօտ գտնվող արեգակ-աստղը:

Լաւ միտներդ պահեցէք, որ մեր արեգակն էլ մի աստղ է, որն աւելի մօտ է մեզ, քան ուրիշ աստղերը, և դրանից է, որ այն աչքպէս լաւ լոյս է տալիս, խափանում է ուրիշ աստղերի լոյսը և մեր աչքին աւելի մեծ է երևում, քան ուրիշ բոլոր աստղերը: Միտներդ պահեցէք նոյնպէս, որ բոլոր այս աստղերը գոյացել են այնպէս, ինչպէս որ գոյացել են մեր արեգակը, մեր երկիրը և մեր լուսինը:

Երբեմն երկրի վրա երևում են երկար պոչով աստղեր: Այդպիսի աստղերը կոչվում են պոչաւոր աստղեր—կամ է տաներ: Տարօրինակ վախ է պատճառում մարդկանց, երբ երևում է մի այդպիսի աստղ: Հասարակ մարդիկ մտածում են, որ թէ երևաց պոչաւոր աստղ, նշանակում է թէ մի վատ բան պիտի պատահի:

Կեանքի մէջ պատահում են շատ անգամ այնպիսի մարդիկ, որոնք ոչինչ կամ շատ քիչ բան գիտեն, բայց ձևացնում են թէ շատ բան գիտեն և սիրում են սուտ ու մուտ բաներ պատմել: Հէնց այդպիսի մարդիկն են, որոնք կամենալով պարծենալ, վախեցնում են ժողովրդին իրանց լիմար գուշակութիւններով: Իրանք օգտվում են ամեն պատահարքից, որ ինչ է՝ ժողովրդի առջև իրանց գիտեցածներովն անուն ստանան: Եթէ պատահում է խաւարում, կամ երկնքի վրա պոչաւոր աստղ, նրանք ուրախանումն են և սկսում են գուշակել մահ, դժբախտութիւն, պատերազմ, ժանտախտ, թագաւորների մահ և այլն:

Ի հարկէ, դրանց գուշակութիւններն իսկի էլ չեն կատարվում. սակայն տգէտ մարդիկ հաւատում են դրանց:

Պատահում են և այսպիսի բաներ:

Եթէ երևաց պոչաւոր աստղը, իսկոյն այդ խելօքները գուշակում են թէ աշխարհի վերջն է

եկել. մինչև իսկ նշանակում են տարին, ամիսը, օրը և նոյն իսկ ժամը, թէ երբ պիտի վերջանայ: Հասնում է որոշված ժամը և ոչինչ չի լինում, աշխարհս դեռ ամբողջ է, մարդիկն էլ ողջ առողջ: Բայց այժմ արդէն գիտեն, որ պոչաւոր աստղերն էլ այնպիսի լուսաւոր գնդեր են, ինչպէս աստղերը. որ նրանք էլ լուսնի և երկրի պէս ճանապարհորդում են երկնքի վրա և երբեմն մօտենում են երկրին այնքան մօտ, որ մենք կարողանում ենք որոշել նրանց երկար պոչը:

Պոչաւոր աստղերի գոյները զանազան են լինում. մէկը սպիտակ է լինում, միւսը կարմիր, երրորդը կապտագոյն, չորրորդը սևեգգոյն-դեղին: Պոչաւոր աստղերի պոչերի մեծութիւնն էլ զանազան են լինում:

Այժմ ուսումնականները մինչև իսկ առաջուց են իմանում թէ քանի տարին մի անգամ է յայտնվում պոչաւոր աստղը, որովհետև նրանք գիտեն թէ պոչաւոր աստղերն ինչ ճանապարհ են բռնել և որքան ժամանակվայ մէջ պտտում են արեգակի շորս կողմը:

Մի ուսումնական սկզբից ասաց, որ 1682 թւին յայտնված պոչաւոր աստղը պիտի յայտնվի նորից 1759 թւին, որովհետև այդ աստղը յայտնվում է 76 տարին մի անգամ: Եւ իրաւ, այդ պոչաւոր աստղը յայտնվեց այդ թւին: Ուսումնականը մեռաւ. անցաւ նորից 76 տարի և 1835 թւին

այդ աստղը նորից յայտնվեց: Կանցնի նորից 76 տարի և մենք կամ մեր որդիքը՝ 1911 թվին նորից կը տեսնեն այդ պոչաւոր աստղին:

Մի քանիսներն ասում են, որ եթէ երկիրըս՝ արեգակի շուրջը պտտելու ժամանակ՝ ընկնի կամ ետ աչի պոչի վրա, այն ժամանակ վատ կը լինի: Սակայն 1861 թվի յունիս ամսի 29-ին մեր երկիրը մի քանի ժամ ընկաւ պոչաւոր աստղի վրա, բայց ոչ աշխարհս կործանվեց, ոչ էլ մի մարդ նկատեց, որ երկիրս գտնվում է մի շատ մեծ կամետայի պոչի վրա, որ երևում էր երկրնքում և որը սարսափեցնում էր իր չար տեսքովը:

VI

Արդեօք մեր աշխարհին վերջ պիտի լինի թէ ոչ, ահա մի հարց, որ մարդիկ շատ անգամ միմեանց տալիս են: Այո, կը լինի:

Բայց վախենալու պետք չը կայ: Ինչպէս երևում է, դեռ կանցնեն շատ միլիոն տարիներ, մինչև որ աշխարհիս վերջը գայ:

Շատ անգամ գուշակել են աշխարհիս վերջը: Ահա, ասում էին, կը յայտնվի Նեոը, կը խաւարի արեգակը, կը հասնի Աստուծու պատիժը: Սակայն այդպէս չեղաւ, աշխարհս մինչև այժմ դեռ անդրդվելի, ամբողջ է ու անվնաս և մարդիկ առաջվայ պէս ապրում են:

Արդեօք ուսումնականները ինչ բան գիտեն

աշխարհիս վերջի մասին, կը հարցնի գուցէ ընթերցողը: Այո, մի քանի բան գիտեն: Աստուծոյ յի պոչի նրանք գիտեն, որ երկիրս իր շուրջը պտտելու արագութիւնը հետզհետէ նուազում է: Բայց այս նուազիլը այնքան աննշան է, որ դեռ շատ միլիոն դարեր կանցնեն, մինչև որ երկիրս բոլորովին կը կանգնի: Աստուծոյ յի պոչի նրանք գիտեն, որ արեգակի լոյսը հետզհետէ պակասում է, բայց պակասում է այնքան աննշան, որ միլիոնաւոր տարիներ պէտք են, որ նրա լոյսը բոլորովին հանգչի:

Արեգակն այնպիսի հրեղէն գունդ է, ինչպէս որ էր մեր երկիրը առաջ: Երկիրը սառեց, ծածկվեց կճեպով: Արեգակն էլ այդպէս պիտի լինի: Նա առաջ կը կարմրի և սոսկալի ցուրտ կը տիրէ երկիրս վրա: շատ անասուններ և բոյսեր կ'ոչնչանան դրանից, որովհետև շատ քիչ լոյս և տաքութիւն կ'ունենան: Մարդս այդ ժամանակ կը սկսի գնալ երկիրս այն կողմերը, ուր ամեն տեղից տաք կը լինի: Վերջապէս արեգակի կարմիր լոյսն էլ կ'ոչնչանայ: Նա կը սկսի պատվել պինդ կճեպով և կը խաւարի յաւիտեան:

Նա այլ ևս չի լինիլ հրեղէն և լոյս տուող գունդ, այլ սև հսկայ մի աշխարհ, որի շուրջը կը պտտեն իրան նման սև և մութ գնդեր:

Հէնց այդ մամանակ էլ երկիրս կը դադարի շարժվելուց և կ'ընկնի արեգակի վրա:

Դ՛ Ռայց մի վախենաք, որովհետև երբ այդ բո-
 լորը կը պատահի, ոչ ոք չի լինիլ աշխարհիս ե-
 րեսին: Այդ այդպէս է, որովհետև երբ արեգակը
 հանգաւ, կեանքի այդ աղբիւրը չորացաւ, այլ ևս
 կենդանի ոչինչ չի մնայ աշխարհումս: Սարսափելի
 ցուրտը կը պատի երկրին. ջրերը, մինչև իսկ օդը՝
 կը սառչեն, սառուց կը դառնան և այդպէս, արե-
 գակի վերջին ճառագայթների լոյսն էլ կը մարի,
 առանց կենդանի վկաների: Իսկ այդ . . . կատարու-
 ալս եւ այդպէս, այդ տխուր վերջից շատ առաջ,
 երկրիս վրա ոչ ոք չի լինիլ—կեանքը կատարելա-
 պէս կը դադարի:

Վ Ե Ր Ձ



2013

« Ազգային գրադարան

NL0066957

Լ ո չ ո տ ե ս ա ն

Ճողովորդական ընթերցանութեան համար.

Վ ի պ ա գ ր ա կ ա ն

ԼԱԼՕ, թիւրքահայերի կեանքից	5 4.
ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ, Գ. Արծրունու	10 ,,
ԱՐՆԱԳԻՆ, Լէօի	7 ,,
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ,	5 ,,
ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ, ըստ Շէքսպիրի	5 ,,
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ,	5 ,,
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏ	
ԳԻՒՂԱԿԱՆ ԶՈՒԹԱԿԱՀԱՐ	5 ,,
ԵՂԲԱՅՐԸ ԵՂԲՕՐ ՂԷՄ,	7 ,,
ԱՐՋԵՐԸ, Գարշինից՝ թարգ. Մ.	5 ,,

Բ ն ա գ ի տ ա կ ա ն

ՊՍՏԻԿ Է ԲԱՅՅ ՉՍՏԻԿ Է, Լուսկեվիչի	5 ,,
Ի՞նչ է ԿԱՅԾԱԿԸ	5 ,,
ԵՐԿԻՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱԲՈՒՂԽ,	6 ,,
ԱՐԵԳԱԿԻ ԵՒ ԼՈՒՄՆԻ ԽԱԽԱՐ,	
ԵՐԿԻՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ թարգ. Վ. Փ.	5 ,,

Կ ե ն ս ա գ ր ա կ ա ն

ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալուժեան. 50 ,,

Ա. ո. ո զ ջ ա պ ա հ ա ն

ԽՕԼԵՐԱ ԵՒ ՆՐԱ ԽՈՍԱՋՆ ԽՈՆՆԵՐՈՒ ՄԻՋՈՂՆԵՐ 5 ,,

Գ Ի Ն Ը 5 Կ Օ Պ Է Կ

Գիմեկ Թիֆլիս,

Խ. Մալուժեան